ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Գ. Միրիջանյանի մոտ 2018 թվականի օգոստոսի 13-ին կայացած խորհրդակցության

Մասնակցությամբ՝

ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալներ *Գ. Գաբրիելյանի*
Կ.Գրիգորյանի
Ա.Ղուկասյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար *Վ.Վարդազարյանի*

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ *Ա.Հովհաննիսյանի*

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների

ՀՀ Արմավիրի մարզպետի օգնականների և խորհրդականների

Օրակարգում

1. *ՀՀ Արմավիրի մարզում առկա հրատապ խնդիրների քննարկում:*

/ՀՀ Արմավիրի մարզպետ – Գ.Միրիջանյան/

Քննարկվեցին՝

Հարց 1. *2016-2018թթ ընթացքում բարեգործական և հասարակական կազմակերպություններին վճարված գումարների և վճարման հիմք հանդիսացող փաստաթղթերի և պայմանագրերի, վարձակալությամբ տրամադրված տարածքների վերաբերյալ ՀՀ Արմավիրի մարզպետարան տեղեկատվություն ներկայացնելու վերաբերյալ :*

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Վ.Վարդազարյանին և աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Վ.Մկրտչյանին՝

2016-2018թթ. ընթացքում բարեգործական և հասարակական կազմակերպություններին վճարված գումարների և վճարման հիմք հանդիսացող փաստաթղթերի և պայմանագրերի, վարձակալությամբ տրամադրված

տարածքների վերաբերյալ ՀՀ Արմավիրի մարզպետարան տեղեկատվություն ներկայացնելու նպատակով մարզի համայնքների,մարզպետարանի ենթակայության հանրակրթական ուսումնական, ինչպես նաև առողջապահական հաստատությունների ղեկավարներին ուղղված համապատասխան շրջաբերական գրություն պատրաստել և ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզպետի հաստատմանը:

/Ժամկետ՝5 օր/

Հարց 2. ՀՀ Արմավիրի մարզպետարանում, մարզպետարանի ենթակայության հանրակրթական ուսումնական, ինչպես նաև առողջապահական հաստատություններում և համայնքապետարանների աշխատակազմերում ու համայնքային ենթակայությամբ գործող բոլոր հաստատություններում կադրային քաղաքականությունը բաց և թափանցիկ իրականացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ Ա.Ղուկասյանին,ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Վ.Վարդազարյանին,տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Ա.Ղուկասյանին,առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Հ.Հարությունյանին,կրթության,մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնակատար Ս.Բուդաղյանին, անձնակազմի կառավարման բաժնի պետ Ն.Մարտիրոսյանին և տեղեկատվության և հասարակայնության բաժնի պետ Հ.Վարդանյանին՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանում, մարզպետարանի ենթակայության հանրակրթական ուսումնական, ինչպես նաև առողջապահական հաստատություններում և համայնքապետարանների աշխատակազմերում ու համայնքային ենթակայությամբ գործող բոլոր հաստատություններում կադրային քաղաքականությունը բաց և թափանցիկ իրականացնելու նպատակով առկա թափուր պաշտոնների և անցկացվող մրցույթների վերաբերյալ համապատասխան տեղեկատվության հավաքագրմամբ և մշակմամբ թարմացնել մարզպետարանի տեղեկատվական կայքէջը,ինչպես նաև հայտարարությունների համապատասխան ցուցատախտակը:

/Ժամկետ՝ 3 օր/

Հարց 3. ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով մարզպետարանի նոր հաստիքացուցակի տարբերակի նախագիծ մշակելու և քննարկման ներկայացնելու վերաբերյալ:

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Վ.Վարդազարյանին և աշխատակազմի ղեկավարի տեղակալ Ա.Հովհաննիսյանին՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով 129 հաստիքային միավորների շրջանակում մշակել և մարզպետի քննարկմանը ներկայացնել Արմավիրի մարզպետարանի նոր հաստիքացուցակի տարբերակի նախագիծ:

/Ժամկետ՝ 20.08.2018թ./

Հարց 4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում կառավարության տարածքային քաղաքականության իրականացման և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեության համակարգման բաշխումն ըստ առանձին բնագավառների հաստատելու վերաբերյալ:

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Վ.Վարդազարյանին և աշխատակազմի ղեկավարի տեղակալ Ա.Հովհաննիսյանին և աշխատակազմի քարտուղարության պետ Դ.Դավթյանին՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում կառավարության տարածքային քաղաքականության իրականացման և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեության համակարգման բաշխումն ըստ առանձին բնագավառների հաստատելու նպատակով պատրաստել և ՀՀ Արմավիրի մարզպետի հաստատմանը ներկայացնել համապատասխան կարգադրության նախագիծ:

/Ժամկետ՝ 20.08.2018թ./

Հարց 5. *Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանում կազմակերպվող քաղաքացիների ընդունելության կարգում փոփոխություն կատարելու վերաբերյալ:*

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Վ.Վարդազարյանին և աշխատակազմի ղեկավարի տեղակալ Ա.Հովհաննիսյանին և աշխատակազմի քարտուղարության պետ Դ.Դավթյանին՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանում յուրաքանչյուր շաբաթվա հինգշաբթի օրը կազմակերպվող քաղաքացիների ընդունելությանը նախապես ցուցակագրված ընդհանուր թվով մինչև 25 (քսանհինգ) քաղաքացիներ ընդունելու վերաբերյալ քաղաքացիների ընդունելության կարգում փոփոխություն կատարելու նպատակով պատրաստել և ՀՀ Արմավիրի մարզպետի հաստատմանը ներկայացնել համապատասխան որոշման նախագիծ:

/Ժամկետ՝ 20.08.2018թ./

Հարց 6. *Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի վարչական տարածքում առկա աղբավայրերի վերաբերյալ:*

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ Կ.Գրիգորյանին և ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ Ա.Հովհաննիսյանին՝

ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի վարչական տարածքում գործող և փակման ենթակա աղբավայրերի առկայությունը ըստ համայնքների և տեղեկատվություն ներկայացնել ՀՀ Արմավիրի Մարզպետին:

/Ժամկետ՝ 20.08.2018թ./

Հարց 7. ՀՀ Արմավիրի մարզի Արշալույս համայնքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների քննարկում կազմակերպելու վերաբերյալ:

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Վ.Վարդազարյանին և աշխատակազմի ղեկավարի տեղակալ Ա.Հովհաննիսյանին,աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Վ.Մկրտչյանին և իրավաբանական բաժնի պետի գլխավոր մասնագետ Ա.Սարգսյանին՝
ՀՀ Արմավիրի մարզպետի մոտ համապատասխան ընթացակարգով կազմակերպել ՀՀ Արմավիրի մարզի Արշալույս համայնքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների քննարկում:

/Ժամկետ՝ 13.08.2018թ./

Հարց 8. ՀՀ Արմավիրի մարզի համայնքապետարանների աշխատակիցների ամենամյա արձակուրդների տրամադրման հետ կապված ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված աշխատանքային փոխհարաբերությունների կարգավորման պահանջների խստագույնս պահպանման վերաբերյալ:

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Ա.Ղուկասյանին՝
ՀՀ Արմավիրի մարզի համայնքապետարանների աշխատակիցների ամենամյա արձակուրդների տրամադրման հետ կապված ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված աշխատանքային փոխհարաբերությունների կարգավորման պահանջների խստագույնս պահպանման վերաբերյալ պատրաստել շրջաբերական գրություն ուղղված ՀՀ Արմավիրի մարզի համայնքների ղեկավարներին և սահմանված ընթացակարգով ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզպետի հաստատմանը:

/Ժամկետ՝ 13.08.2018թ./

Հարց 9. ***Նույնականացման քարտով էլեկտրոնային ստորագրությունները կիրառելու դեպքում ստորագրվող փաստաթղթերի ձևաչափի և համապատասխան համակարգում /«MulberryGroupware»/ նույնականցման քարտերով էլեկտրոնային ստորագրության անցնելու վերաբերյալ:***

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Վ.Վարդազարյանին և աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի պետ Ն.Մարտիրոսյանին՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանում էլեկտրոնային ստորագրության իրավասություն ունեցող բոլոր անձանց համար մինչև 2018 թվականի սեպտեմբերի 14-ը կազմակերպել ՀՀ նույնականացման քարտերի ձեռքբերման գործընթացը՝ ԷԿԵՆԳ ՓԲԸ-ի միջոցով ակտիվացնելով քարտի վրա առկա էլեկտրոնային ստորագրությունը և արդյունքների մասին զեկուցել ՀՀ Արմավիրի մարզպետին:

/Ժամկետ՝ 10.09.2018թ./

Հարց 10. ***Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջանֆիդա համայնքում արձանագրված մահվան դեպքի հետ կապված փաստական հանգամանքները պարզաբանելու նպատակով աշխատանքային խումբ ստեղծելու վերաբերյալ:***

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետի տեղեկալ Ա. Ղուկասյանին և աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Հ.Հարությունյանին՝ նախապատրաստել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջանֆիդա համայնքում արձանագրված մահվան դեպքի հետ կապված փաստական հանգամանքները պարզաբանելու նպատակով աշխատանքային խումբ ստեղծելու վերաբերյալ ՀՀ Արմավիրի մարզպետի կարգադրության նախագիծ և սահմանված ընթացակարգով ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզպետի հաստատմանը:

/Ժամկետ՝ 20.08.2018թ./

Հարց 11. *Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքներում խմելու ջրի սպասարկման օպերատորի առկայության ճշգրտման վերաբերյալ:*

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ Կ.Գրիգորյանին և ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ Ա.Հովհաննիսյանին՝

համապատասխան ուսումնասիրմամբ ճշգրտել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքներում խմելու ջրի սպասարկման օպերատորի առկայությունն ըստ համայնքների և արդյունքները ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզպետին:

/Ժամկետ՝ 20.08.2018թ./

Հարց 12. *Նոր Կեսարիա համայնքի վարչական տարածքում գտնվող Երևան քաղաքի բնակիչ Աշոտ Ադուլյանին պատկանող 39.0 հա հողամասի առնչությամբ դիմումի ընթացքի և պատասխանի հետ կապված պարզաբանում տալու վերաբերյալ:*

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ Գ.Գաբրիելյանին և աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի գլխավոր մասնագետ Ս.Սարգսյանին՝

Նոր Կեսարիա համայնքի վարչական տարածքում գտնվող Երևան քաղաքի բնակիչ Աշոտ Ադուլյանին պատկանող 39.0 հա հողամասի առնչությամբ դիմումի ընթացքի և պատասխանի հետ կապված պարզաբանում տալ ՀՀ Արմավիրի մարզպետին:

/Ժամկետ՝ 20.08.2018թ./

Հարց 13.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում տեղացած աննախադեպ կարկտահարության հետևանքների վերացման աշխատանքները արդյունավետ համակարգելու հետ կապված ՀՀ Արմավիրի մարզպետին չվճարվող արձակուրդ տրամադրելու մասին ՀՀ վարչապետին ուղղված գրությունը չեղյալ համարելու վերաբերյալ:

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Վ.Վարդազարյանին և աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի պետ Ն.Մարտիրոսյանին՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում տեղացած աննախադեպ կարկտահարության հետևանքների վերացման աշխատանքները արդյունավետ համակարգելու նպատակով պատրաստել ՀՀ վարչապետին ուղղված համապատասխան գրություն ՀՀ Արմավիրի մարզպետի չվճարվող արձակուրդից օգտվելու վերաբերյալ 2018 թվականի օգոստոսի 9–ի N 01/14/3525-18 գրությունը չեղյալ համարելու վերաբերյալ:

/Ժամկետ՝ 20.08.2018թ./

Հարց 14. <<Մ-5-Երևան-Արմավիր-Թուրքիայի սահման>> միջպետական ճանապարհի Սարդարապատ գյուղական համայնքով անցնող համապատասխան հատվածում ճանապարհային նշանների ավելացման և հետիոտնային անցումների գծանշումներ կատարելու անհրաժեշտության վերաբերյալ:

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ Կ.Գրիգորյանին և ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ Ա.Հովհաննիսյանին՝

<<Մ–5-Երևան–Արմավիր-Թուրքիայի սահման>> միջպետական ճանապարհի Սարդարապատ գյուղական համայնքով անցնող համապատասխան հատվածում ճանապարհային նշանների ավելացման և հետիոտնային անցումների գծանշումներ կատարելու խնդրի կարգավորման նպատակով համապատասխան գրություն պատրաստել ուղղված ՀՀ տրանսպորտի,կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությանը և սահմանված ընթացակարգով ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզպետի հաստատմանը:

/Ժամկետ՝ 20.08.2018թ./

Հարց 15. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքներում ինքնակամ շինարարության և շենք-շինությունները իրենց գործառական նշանակությանը ոչ համապատասխան օգտագործելու դեպքերը հայտնաբերելու և օրենքով սահմանված կարգով կանխելու վերաբերյալ:

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ Կ.Գրիգորյանին և ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ Ա.Հովհաննիսյանին՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքներում ինքնակամ շինարարության և շենք-շինությունները իրենց գործառական նշանակությանը ոչ համապատասխան օգտագործելու դեպքերը հայտնաբերելու և օրենքով սահմանված կարգով կանխելու նպատակով պատրաստել համապատասխան շրջաբերական գրություն ուղղված ՀՀ Արմավիրի մարզի համայնքների ղեկավարներին և սահմանված ընթացակարգով ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզպետի հաստատմանը:

/ժամկետ՝ 20.08.2018թ./

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 17.08.2018 16:02:13 GMT+4

Подписано: MIRIJANYAN GAGIK 2608810403

ՄԱՐԶՊԵՏ՝
Գ. ՄԻՐԻՋԱՆՅԱՆ

Արծ.՝
Դ.Դավթյան